

LIFE – «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» ծրագրի

ՏԵՂԵԿԱԳԻՐ #3

Սեպտեմբեր - հոկտեմբեր 2012 թ.



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



Save the Children

Այս համարում կարդացեք՝

LIFE ծրագրի (2012-2015)

իրա կա նա ցնոնի

«Մ ել դը չի դրեն»

կա զմա կերպ ութրմիլ Մ Ն

Մ Ջ Գ ֆինա նսա վորմա մբ

Ծ ր ա գր հործընկերներին

«Ա կտ իվա » միջա զգա ին

հիմնա դրա միլ միսոն»

«Էջ-Դ իՓ ի հիմնա դրա ն»

«Լիա բժեղյա նք» Զ -ները

Ծ ր ա գիրքերտ որեն

հա մա գործա կցոնի

ա շի ա տ ա նի ղոցիա լա կա ն

հա բցերինա ի ա րա բությա ն

«Զբաղվածությանն էտ ա կա

ծառա բությա ն»

գործա կա բությա ն

զբաղվածության

կենտ բոնների

հա շմա նդա մությա ննեցող

ա նձա նց Զ -ների,

մա բզա իմի շի ա նությա նների

և տ եղա կա ն

ինքնա կառա վա բմա ն

մա բմիների,

ծառա բությա ններ

մա տ ուցողներ ի ղի ղին

մա սնա գիտկա նկրթա կա ն

հա ստ ա տ ությա նների

գործա տ ուներին:

- Կ բր սեղա ն քննա բկոմ նվիրվա ծ հա շմա նդա մությա ն ունեցող ա նձա նց զբաղվածության ն ա պ ա հովմա ն մեխ ա նիզմներին,
- Ա շի ա տ ա նքի տ ոնա վա ճ ու ներ ի ներգրա վմա մբ
- Գ ործա տ ուներին տ հա նդիպ ումներն ոստ ումնա լիցկիզբ Մ պ իտ աքի դա քոն
- Ճ ու մա կա բզող ա շի ա տ ա նքա ին իս մբերի ստ եղծոմ,
- Վ երա պ ա տ րա ստ ում նրնթա ցնեղ Մ Գ գործընկեր կա զմա կերպ ութրմիլ շի ա տ ա կիցնեղ մա,ր
- Ֆ ոտ ոցուցա հա նդես «Շ բջա նա կից ա յի կողմ»,
- Ֆ իլետ ա իպ ա տ մությա նն
- LIFE ծրագրի շրջա նա կներում նա իս ա տ եսվող միջոցառումներ



Կլոր սեղան քննարկում



ՀՀ էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ և LIFE ծրագրի աջակցությամբ, ս.թ. հոկտեմբերի 17-ին Կոնգրես հյուրանոցում կայացավ «ՀՀ հաշմանդամների զբաղվածության ապահովման մեխանիզմների մշակման Զեկույց»-ի քննարկմանը նվիրված կլոր սեղան, որին մասնակցում էին ներկայացուցիչներ պետական և գործարար կառույցներից, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններ:

Կլոր սեղանը նպատակ ուներ քննարկել ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ակտիվացման ազգային մեխանիզմների ներդրմանն ու զարգացմանն ուղղված լուծումները:

Հանդիպման ընթացքում զեկույցի վերաբերյալ ելույթներ ունեցան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչություն պետ Արթուր Կեսոյանը, նույն նախարարության Աշխատանքի և զբաղվածության վարչություն պետ Թադևոս Ավետիսյանը, ինչպես նաև «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ Սոնա Հարությունյանը:

Մասնակիցները ծանոթացան հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանն ուղղված միջազգային փորձին, տարբեր երկրներում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանը նպաստող առկա մեխանիզմներին և Հայաստանում դրանց կիրառման հնարավորություններին՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար «դրական խտրականության» գնահատականները և հաշվարկները Հայաստանի տնտեսական չափանիշների տեսանկյունից:

Քննարկումներն առավել արդյունավետ և թափանցիկ դարձնելու նպատակով, մասնակիցներն առաջարկեցին ստեղծել աշխատանքային խումբ՝ կազմված պետական, մասնավոր և հասարակական կառույցներից, որը կնպաստի Հայաստանում նշված մեխանիզմների ամբողջական և գործունե համակարգը իրավական ու գործառնական հիմքերի վրա դնելու գործընթացին:

Աշխատանքի տոնավաճառներ



Գործատուների և աշխատանք փնտրող ՀՈՒԱ-ների հանդիպումը հեշտացնելու նպատակով LIFE ծրագրի շրջանակներում նախատեսված է անցկացնել ավելի քան 10 Աշխատանքի տոնավաճառներ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, «Հայաստանի գործատուների հանրապետական միության» և «ՀՀ Առևտրաարյունաբերական պալատ»-ի հետ համագործակցությամբ:

Աշխատանքի տոնավաճառների խնդիրն է հանրության լայն շրջանակներում տնտեսության զարգացող ոլորտների, նոր մասնագիտությունների հանդեպ հետաքրքրություն առաջացնելը, ինչպես նաև գործատուների աշխատուժի պահանջարկը լրացնելը:

Գործատուին այն հնարավորություն է տալիս

- Կարճ ժամանակահատվածում հանդիպել մեծ թվով աշխատանք փնտրողների,
- Բարձր որակավորում ունեցող աշխատողներով համալրել թափուր աշխատատեղերը,

- ստեղծել որակյալ մասնագետների տվյալների բազա,
- գովազդել կազմակերպությունը, արտադրանքը կամ ծառայությունները:

Աշխատանք փնտրող ՀՈՒԱ-ին.

Նույն վայրում հանդիպել բազմաթիվ գործատուների հետ,

- անմիջապես կապեր հաստատել տարբեր գործատուների հետ,
- գտնել իր որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանք,
- ընդգրկվել տարբեր գործատուների տվյալների բազայում՝ առաջիկայում աշխատանքի առաջարկ ստանալու ակնկալիքով:

Բացի այդ այն հնարավորություն է ընձեռում

- ստանալ տեղեկատվություն աշխատաշուկայի միտումների վերաբերյալ,
- ստանալ տեղեկություններ զբաղվածության պետական ծրագրերի վերաբերյալ,
- ստանալ տեղեկություններ ուսումնական հաստատությունների և նրանց ծրագրերի վերաբերյալ,
- ծանոթանալ տարբեր կազմակերպությունների գործունեությանը՝ աշխատաշուկայում ճիշտ կողմնորոշվելու և մրցունակ դառնալու նպատակով:

Ի դեպ, տոնավաճառները բաց են բոլոր աշխատանք փնտրողների համար:

2012թ-ի հուլիսի – սեպտեմբեր ամիսներին LIFE ծրագիրը աջակցել է Լոռու, Շիրակի

և Արարատի մարզում աշխատանքի տոնավաճառների անցկացմանը՝ ապահովելով տեղեկատվական թերթիկների տպագրությունը, հեռուստա և ռադիո հայտարարությունները, անհրաժեշտ գրենական պիտույքները և ամենակարևորը՝ ՀՈՒԱ մասնակցությունը Վանաձորում, Գյումրիում ու Արտաշատում անկացվող տոնավաճառներին:

Հուլիսի 27-ին Վանաձորի Շ. Ազնավուրի անվան մշակույթի պալատում իրականացված տոնավաճառին մարզի կտրվածքով մասնակցեցին 32 գործատու՝ 550 առկա և 421 սպասվելիք թափուր աշխատատեղերով: Տոնավաճառի ընթացքում ներկայացվեցին բարձրագույն, միջին մասնագիտական կրթության և բանվորական մասնագիտություններով աշխատատեղեր, ինչպիսիք են վարկային մասնագետ, գլխավոր հաշվապահ, ինժեներ, տեխնոլոգ, կարող բանվոր, փականագործ, եռակցող, ֆրեզերագործ և այլն: Աշխատանքի տոնավաճառին մասնակցեց շուրջ 3000 աշխատանք փնտրող, այդ թվում «Լիարժեք կյանք» ՀԿ-ի աջակցությամբ տոնավաճառի վայր ժամանաց 22 հաշմանդամներ: Աշխատանքի տոնավաճառի արդյունքում գործատուներին աշխատանք փնտրողների կողմից ներկայացվել են շուրջ 524 ռեզյումե, այդ թվում 16-ը հաշմանդամություն ունեցող անձանց կողմից:

Իսկ օգոստոսի 30-ին Գյումրու աշխատանքի տոնավաճառին մասնակցում էր 35 գործատու, որոնց կողմից ներկայացվել էր 216 առկա և 179 սպասվելիք թափուր աշխատատեղեր:

Ներկայացված աշխատատեղերը հիմնականում շինարարության, կրթության, առևտրի և սպասարկման, արտադրության, բանկային ոլորտներում էին: Աշխատանքի տոնավաճառին մասնակցել է շուրջ 2150 աշխատանք փնտրող, այդ թվում 18 ՀՈՒԱ-ներ Գյումրիից, Արթիկից և Աշոցքից:

Արտաշատում սեպտեմբերի 27-ին ԶՊԾԳ-ի կազմակերպված տոնավաճառին մասնակցել են նաև շուրջ 400 աշխատանք փնտրողներ, այդ թվում հաշմանդամություն ունեցող անձինք մարզի բոլոր համայնքներից: Շիրակում և Արարատում տոնավաճառների կազմակերպմանը աջակցել էր HDP հիմնադրամը:

Աշխատանքի տոնավաճառների ընթացքում «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության LIFE ծրագրի, «Լիարժեք կյանք» և HDP հիմնադրամ ՀԿ-ների աշխատակիցները հանդիպել են ներկա բոլոր գործատուներին, ծանոթացրել LIFE ծրագրին և բաժանել տեղեկատվական նյութեր, ինչպես նաև ՀՈՒԱ զբաղվածության խնդրի լուծմանն ուղղված հետագա համագործակցության պայմանավորվածություն ձեռք բերել գործատուների հետ:



Գործատուների հետ հանդիպումներ

LIFE ծրագրի շրջանակներում գործընկեր կազմակերպությունները պարբերաբար հանդիպումներ են անցկացնում գործատուների հետ: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին HDP հիմնադրամի կողմից հանդիպումներ են կազմակերպվել Շիրակի մարզի Ամասիա համայնքի և Երևանի Աջափնյակ համայնքի գործատուների հետ: Գործատուների հետ հանդիպումներ Լոռու Գեղարքունիքի մարզերում կազմակերպել է «Լիարժեք կյանք» ՀԿ-ն: Նմանատիպ մի հանդիպում էլ անցկացրել է «Ունիսոն» ՀԿ-ն Սպիտակ քաղաքում:

Խոստումնալից սկիզբ Սպիտակում



Հոկտեմբերի 18-ին ք.Սպիտակում «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը LIFE ծրագրի շրջանակներում անցկացրեց կյոբ սեղան-քննարկում գործատուների հետ: Վերջիններիս թվում էին ինչպես պետական կառույցների, այնպես էլ մասնավոր սեկտորի 8 ներկայացուցիչներ: Հանդիպմանը ներկա էր նաև Սպիտակի զբաղվածության կենտրոնի աշխատակիցը: Քննարկումը, հատկապես միջացառման երկրորդ կեսը կրում էր ակտիվ, մասնակցային բնույթ: Գործատուները ծանոթացան հաշմանդամների զբաղվածության ոլորտին առնչվող պետական ծրագրերին և իրավական ակտերին, որոնք գործնական հետաքրքրություն առաջացրեցին նրանց մոտ: Թեև, հարկ է նշել, որ գործատուների մի մասը ցանկություն ուներ աշխատանքի վերցնել հաշմանդամություն ունեցող անձանց, չդիմելով վերոնշյալ ծրագրերին, քանի որ ըստ իրենց, կստեղծվի տպավորություն, որ նրանք հաշմանդամին աշխատանք են տրամադրել միայն ելնելով սեփական շահից: Իրականում, լինելով 1988թ.-ի երկրաշարժի էպիկենտրոնը, Սպիտակը

հաշմանդամության հիմնահարցը դիտարկում է առաջնայինների թվում, և այս առումով տեղի հասարակությունը ավելի պատրաստ է ընդունել ներառման գաղափարը:

«Ունիսոնի» կողմից ցուցադրած տեսանյութերը բացահայտեցին գործատուների առջև նաև հաշմանդամների բազմաբնույթ աշխատանքային հնարավորությունները, ապացուցելով, որ կախված հաշմանդամության տեսակից, մարդ կարող է ներառվելու շանս չունենալ մի ոլորտում, բայց լինել անգերազանցելի մեկ այլ ասպարեզում:

Մասնակիցներին առաջարկվեց թափուր աշխատատեղերի առկայության դեպքում տեղակայել վերջիններս www.jobs.disbility.am կայքում: Մինևույն ժամանակ, նշվեց, որ «Ունիսոն»-ի Սպիտակի մասնաճյուղը, Երևանյան գրասենյակի օրինակով, շուտով կունենա աշխատանք փնտրողների տվյալների բազա, որը թույլ կտա տեղի գործատուներին տրամադրել թափուր աշխատատեղերին համապատասխան թեկնածուներ: Սպիտակի գործատուները, որոնցից մի քանիսը հանդիպման սկզբում թերահավատորեն էին տրամադրված թե՛ հաշմանդամների աշխատանքային ներուժի, և թե՛ պետական ծրագրերի մեխանիզմների կիրառման հանդեպ, միջոցառման ավարտին մեծ ոգևորություն դրսևորեցին: Կարծում եմ, համագործակցությունը դրվեց ամուր հիմքերի վրա, և արդյուքները իրենց երկար սպասեցնել չեն տա:

Համակարգող աշխատանքային խմբերի ստեղծում

LIFE ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծրագրի թիրախ բոլոր մարզերում ստեղծել Համակարգող աշխատանքային խմբեր՝ հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՌԻԱ) աշխատաշուկայում ներգրավմանն աջակցելու և տարբեր շահագրգիռ կողմերի միջև արդյունավետ համագործակցությանը նպաստելու նպատակով:

Մարզերում Համակարգող աշխատանքային խմբերի անդամներն են լինելու հետևյալ կառույցների ներկայացուցիչները.

- Մարզի ՀՌԻԱ հիմնահարցերով հանձնաժողով
- Մարզային զբաղվածության կենտրոն
- Գործատուների միության մարզային մասնաճյուղ
- Մասնագիտական ուսումնական հաստատություններ
- ՀՌԻԱ հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ներ:



Համակարգող աշխատանքային խմբերի (ՀԱԽ) հանդիպումները կկայանան առնվազն եռամսյակը մեկ անգամ՝ ծրագրի առաջընթացը վերանայելու, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկա ինտեգրվելու գործընթացը գնահատելու, ինչպես նաև առկա խնդիրները և հետագա քայլերը քննարկելու նպատակով:

Առաջին հանդիպումն արդեն կայացել է Շիրակի մարզի համակարգող աշխատանքային խմբի հետ:

Հանդիպման ընթացքում Շիրակի մարզում LIFE միջոցառումների համար պատասխանատու HDP հիմնադրամի տնօրեն Ռուզաննա Տեր-Ղազարյանը ներկայացրել է LIFE ծրագրի շրջանակներում մարզում ս.թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին իրականացրած աշխատանքները: Հանդիպման մասնակիցների խնդրանքով նա նաև մանրամասնել է MAST թեսթավորման գործընթացը՝ ներկայացնելով դրա նպատակը և կիրառելիությունը: Հանդիպմանը քննարկվեց ՀՌԻԱ զբաղվածության հիմնախնդիրները, նրանց աշխատանքի տեղավորման դժվարությունների առանձնահատկությունները գյուղական և քաղաքային համայնքներում: Առաջարկվեց ավելի սերտ համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների՝ մասնավորապես համայնքային տարբեր կառույցների հետ: Հանդիպմանը պայմանավորվածություն է ձևակերպվել նոյեմբերի 6-ից դեկտեմբերի 3-ի ընթացքում նախատեսվող համապետական քարոզարշավի շրջանակներում Շիրակի մարզում անցկացվելիք միջոցառումների վերաբերյալ:

**Մասնագիտական հմտությունների
զարգացման, հաշմանդամություն ունեցող
անձանց անհատական եվ խմբային հզորացմանն
ուղղված մոտեցումների վերաբերյալ
վերապատրաստումներ:**



Ս.թ. սեպտեմբերի 11-13-ը և հոկտեմբերի 08-10-ը ԶՊԾԳ և գործընկեր ՀԿ-ների աշխատակիցների համար կայացան «Մասնագիտական հմտությունների զարգացման, հաշմանդամություն ունեցող անձանց անհատական եվ խմբային հզորացմանն ուղղված մոտեցումների վերաբերյալ դասընթացները», որոնք վարում էին Նիդերլանդների Ակտիվա միջազգային հիմնադրամի փորձագետներ Հենկ դե Յոնգը և Արրի Հյուշենը: 3-օրյա դասընթացները նպատակ ունեին ցույց տալ մասնակիցներին խմբային և անհատական աշխատանքի վարման մեխանիզմները և տեխնիկան, խմբի զարգացման դինամիկան և առանձնահատկությունները: Դասընթացի նպատակն էր նաև նպաստել մասնակիցների, որպես վերապատրաստողների հմտությունների զարգացմանը. մասնավորապես վերապատրաստողի նկատմամբ պահանջների գիտակցումը և դրանց համապատասխանեցումը սեփական փորձին և հմտություններին, ժամանակի և կոնֆլիկտների կառավարման մեխանիզմների, ինչպես նաև «ակտիվ լսելու» տեխնիկայի և «աչքի կոնտակտի» պահպանման կիրառման անհրաժեշտությունը:

Դասընթացները տեսական նյութերի և պրակտիկ վարժությունների, ինչպես նաև դերային խաղերի համակցություն էր, ինչը բավականին ուսանելի և հետագայում կիրառելի փորձ էր դասընթացի մասնակիցների համար:

**Հաշմանդամության մտավոր և հոգեկան
առանձնահատկությունների վերաբերյալ
վերապատրաստում**

Ս.թ. հոկտեմբերի 1-ին «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության (ԶՊԾԳ) նիստերի դահլիճում մեկնարկեց «Հաշմանդամության մտավոր և հոգեկան առանձնահատկությունների վերաբերյալ դասընթացը», որը վարում էր Նիդերլանդների Ակտիվա միջազգային հիմնադրամի փորձագետ Փոլ դե Ղոյը: Դասընթացի մասնակիցների թվում էին ԶՊԾԳ տասը ավագ վերապատրաստողներն ու LIFE ծրագրի գործընկեր ՀԿ-ների վեց սոցիալական աշխատողները: Ծրագրի հիմնական նպատակն էր աջակցել սոցիալական ոլորտի մասնագետներին խոցելի խմբերի հետ աշխատանքում՝ մասնավորապես հոգեկան խնդիրներ ունեցող մարդկանց հետ, ինչպես նաև օժանդակել նմանատիպ խնդիրներ ունեցող մարդկանց աշխատանք գտնելու հարցում: Արձարձված թեմաների շարքում էին՝

- հոգեկան խանգարումներ/խնդիրներ, տրամադրության հետ կապված խանգարումներ/ տատանումներ,
- անհանգստություն և անհատականության, վախի խանգարումներ
- աուտիզմ, հակասոցիալական/սահմանային անհատականություն
- ուղեցուցային աղյուսակ

Վերապատրաստման դասընթացն ավարտվեց գործնական աշխատանքով: Մասնակիցները նախապես բաժանվեցին 4 խմբի, և յուրաքանչյուր խումբ ներկայացրեց նախօրոք հանձնարարված թեման /վախի խանգարումներ, աուտիզմ, հակասոցիալական անհատականություն, սահմանային անհատականություն/, որից հետո ծավալված քննարկումների ընթացքում մատուցված նյութն առավել ամրապնդվեց:

«Դիտարկման մեթոդոլոգիա- մաս II» թեմայով վերապատրաստում



Ս.թ. հոկտեմբերի 11-12-ին Գյումրու «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնման կենտրոնում /ՀՄԿԱՎԿ/» կայացավ «Դիտարկման մեթոդոլոգիա» թեմայով դասընթացի 2-րդ մասը, որը վարում էր Նիդեռլանդների Ակտիվ միջազգային հիմնադրամի փորձագետ Յան Օսթինգը: Դասընթացին մասնակցում էին Գյումրու մարզային զբաղվածության կենտրոնի, ՀՄԿԱՎԿ-ի և HDP հիմնադրամի աշխատակիցները: Դասընթացի նպատակն էր ուսուցանել մասնակիցներին դիտարկման մեթոդոլոգիայի մաս կազմող թեսթավորման մոդել-նմուշի կիրառման տեխնիկան, որը թույլ է տալիս դիտարկում և գնահատում կատարել 3 ուղղություններով. անձի կարողությունների գնահատում, աշխատատեղի գնահատում և ֆունկցիայի/առաջադրանքի գնահատում: Դասընթացավարը ներկայացրեց նաև հատուկ համակարգչային ծրագիր, որը հնարավորություն է տալիս ստեղծել աշխատանք փնտրողի կարողությունների, տարբեր ֆունկցիաների/առաջադրանքների և աշխատատեղերի պրոֆիլները, համեմատել դրանք միմյանց հետ, ինչպես նաև տեսնել աշխատանք փնտրողի պրոֆիլների պատմությունը:

Դասընթացի գործնական մասը շարունակվեց կահույքի արտադրամասում, որտեղ մասնակիցները դիտարկեցին կատարվող տարբեր աշխատանքները և համապատասխան վերլուծություն ներկայացրեցին դասընթացավարին: Դասընթացի շարունակությունը նախատեսվում է կազմակերպել ս.թ. նոյեմբերի 8-9-ին:

«Mast» թեսթավորման վերաբերյալ դասընթացավարների վերապատրաստում-մաս II

Ս.թ. հոկտեմբերի 24-26-ը ՀՀ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության (ԶՊԾԳ) 10 ավագ վերապատրաստողների և LIFE ծրագրի գործընկեր ՀԿ-ների սոցիալական աշխատողների մասնակցությամբ անցկացվեց դասընթացավարների վերապատրաստում (ToT) MAST թեսթավորման վերաբերյալ երկրորդ դասընթացը, որը վարում էր Նիդեռլանդների Ակտիվ միջազգային հիմնադրամի փորձագետ Յան Օսթինգը: 3-օրա դասընթացի նպատակն էր ծանոթացնել մասնակիցներին MAST թեսթավորման սարքավորման և դրա հետ աշխատելու մեթոդների հետ: Դասընթացավարը ներկայացրեց նաև, թե ինչպես պետք է սկսել թեսթավորումը, ինչ պետք է անել դրանից առաջ, ինչպես ներկայացնել թեսթավորման նպատակը թեկնածուին և այլ տեսական հարցեր: Դասընթացավարի կողմից հանձնարարված ակտիվ գործնական առաջադրանքների շնորհիվ մասնակիցները սովորեցին աշխատել MAST թեսթավորման սարքավորման հետ, յուրացրեցին սարքավորման 19 թեսթերը անցկացնելու տեխնիկաները, ինչպես նաև ձեռք բերեցին թեսթավորման արդյունքում հաշվետվություն գրելու և համապատասխան եզրակացության հանգելու հմտություններ:

Ծրագրի շրջանակներում արդեն իսկ ձեռք են բերվել MAST թեսթավորման սարքավորումները, և տրամադրվել LIFE ծրագրում ընդգրկված բոլոր զբաղվածության կենտրոններին:



Ֆոտոցուցահանդես «Շրջանակից այն կողմ»



Հոկտեմբերի 26-ին, «Մոսկվա» կինոթատրոնի այցելուներին ներկայացվեց յուրատեսակ մի ֆոտոցուցահանդես, որի նախաձեռնողը «Ունիսոն» հասարակական կազմակերպությունն էր: «Շրջանակից այն կողմ» խորագրի ներքո համախմբված լուսանկարներում պատկերված էին հաշմանդամություն ունեցող ֆոտոմոդելներ: Այս համարձակ, և Հայաստանի համար նորարարական նախագիծն իրականացվեց Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան-ի ֆինանսավորմամբ՝ «Բազմազանության խթանում հանուն հավասարության» ծրագրի շրջանակներում: Աջակցություն ցուցաբերեցին նաև «Մոսկվա» կինոթատրոնն ու Էկզոտարիում ընկերությունը:

Նախաձեռնության հիմնական նպատակն է ակնառու կերպով բարձրաձայնել այն պարզ իրողությունը, որ համապատասխան հնարավորության ընձեռնման դեպքում հաշմանդամը կարող է հաջողությամբ ներառվել ցանկացած, նույնիսկ ամենաանսպասելի ոլորտներում՝ հասնելով մեծ բարձունքների և իրագործելով դեռևս չբացահայտված ներուժը:

Հասարակության մեջ տիրող կարծրատիպերին հակառակ, հաշմանդամ կինը այս լուսանկարներում մարմնավորում է

գեղեցկության և հմայքի, ազատության և ինքնատիպության գաղափարը: Հաշմանդամությունը, նկատելի էր միայն առաջին լուսանկարներում, մնացած նմուշներում ֆիզիկական խնդիրները մնում են «կադրից դուրս»: Մոդելները, որոնց համար սա առաջին փորձն էր ոլորտում, նորովի բացահայտեցին սեփական անձը, գրավիչ լինելու արվեստը և կերպարային փոփոխությունների լայն հնարավորությունները:

Հետաքրքիր էր կարդալ ցուցահանդեսի այցելուների գրավոր արձագանքները, որոնց համար նախատեսված էր հատուկ արկղ: «Հիանալի է», «Բարձր տրամադրությամբ եմ հեռանում այստեղից», «Մայր բնությունն ու կին»... «Ահա այն բնական կապը, որ տիեզերքը պարզևել է մարդուն: Անվերջ կարելի է տեսնել ու զգալ այդ մեծ հմայքի գաղտնիքը...»

Հատկապես գոհացուցիչ էր այն հանգամանքը, որ մատաղ սերնդի ներկայացուցիչները նույնպես անտարբեր չմնացին ցուցահանդեսի գաղափարին. դպրոցական մի աղջնակ իր տարիքին բնորոշ անմիջականությամբ և անկեղծությամբ գրել էր. «Շնորհակալություն, դուք ջերմացրեցիք մեր փոքր-ինչ սառած զգացմունքները»:

Նախագծին մասնակցել է 11 մոդել՝ Երևանից (Տիգրանուհի Մինասյան, Անահիտ Վարդանյան, Լիլիթ Պետրոսյան) և Հայաստանի 7 մարզերից՝ Արագածոտն (Անահիտ Խալաթյան), Կոտայք (Լուիզա Սուքիասյան), Գեղարքունիք (Անի Ղուկասյան), Լոռի (Քրիստինե Փիրուզյան), Սյունիք (Մերի Մեժլումյան), Շիրակ (Գրետա Վարդանյան և Քրիստինե Աղանյան) և Արմավիր (Մերի Մլիհամյան): Ֆոտոմոդելները անձամբ ներկա էին ցուցահանդեսի բացմանը և չէին թաքցնում իրենց հուզմունքը:



Չէի կարող անգամ պատկերացնել, որ « ինձ կընձեռնվի այսպիսի բացառիկ ֆոտոցուցահանդեսի գլխավոր հերոսուհիներից մեկը դառնալու հնարավորություն», - խոստովանում է Լուիզա Սուքիասյանը: Իսկ Մերի Մեծլուսյանի համար իրականացավ ֆոտոմոդել դառնալու կյանքի իր մեծագույն երազանքը: Կրքոտ և ռոմանտիկ, օրիենտալ և էկզոտիկ, հարսանեկան և տիպային կերպարների միջավայր էին տեղափոխում լուսանկարները ցուցահանդեսի այցելուներին: Էլեգանտ ոճով և գեղարվեստական նուրբ ճաշակով էին արված նաև նյու ժանրի լուսանկարները:

Ֆոտոմոդելների ոճային բազմազանության հեղինակն է արհեստավարժ աշխատանքային խումբը՝ լուսանկարիչներ Սուրեն Մանվելյանը, Ռասմիլա Ալավերդյանը, Եվգենիա Էվոյանը, Մարիաննա Մելիքսեթյանը և Գարեգին Ղազարյանը, ոճաբաններ Սեդա Մանուկյանը (Ատեքս) և Կարինե Ավագովան, վարսահարդարներ Արմեն Մուրադյանը և Արմեն Վենետիկյանը ու դիմահարդարներ Սոնա Աբրահամյանը և Նարինե Հովհաննիսյանը:

Ֆոտոցուցահանդեսը տևեց 4 օր: Հիմնվելով այցելուների ոգևորիչ արձագանքների և լրատվամիջոցների կողմից լայն լուսաբանման վրա, կարելի է ասել, որ հասավ իր նպատակին: Կարծում եմ, հասարակության մի ստվար զանգվածի մոտ առաջ եկած նոր պատկերացումները հաշմանդամություն ունեցող մարդկանց հնարավորությունների մասին կկոտրեն նախկինում գոյություն ունեցած շրջանակները:

Հեղինակ՝ Մարիաննա Զալիկյան

Ֆիլետայի պատմությունը



«Հիմա, երբ ունենալ աշխատանք, ձգտում եմ կայանալ, ապագայի հեռակարներ են բացվում, նաև մտածում եմ հիմնել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություն, որի մասին երազել եմ ամբողջ կյանքում, որովհետև իմ փորձից էլնելով կարող եմ ասել, որ աշխատանքն է կայանալու թիվ 1 նախապայմանը՝ կապ չունի մարդը ունի հաշմանդամություն, թե ոչ:»

Ծնունդով պավերդցի Ֆիլետա Ներսիսյանն անթաքույց ուրախությամբ է ասում, որ վերջին շրջանում հաջողություններն ընկերացել են իրեն: Նա որակավորված դիմահարդար է, բայց աշխատանքային բազմազանության և նախասիրությունների պակաս չի ունեցել:

«Ալավերդիում ապրած ընթացքում աշխատել եմ. սկզբում՝ մասնագիտությամբ, մի կարճ ժամանակահատված՝ անտառտնտեսությունում, ապա նաև ակումբավար էի, անգամ ժամագործություն եմ արել, ունեմ նաև նկարչական ձիրք, շատ եմ սիրում արվեստը.» - ժպիտով ասում է Ֆելիտան:

Վանաձոր տեղափոխվելուց հետո, LIFE ծրագիր գործընկեր «Լիարժեք կյանք» ՀԿ ուղղորդմամբ, գրանցվեց Զբաղվածության Վանաձորի մարզային կենտրոնում՝ որպես աշխատանք փնտրող: «Լիարժեք կյանք» ՀԿ հետ տևական շփումների արդյունքում՝ կարճ ժամանակ անց զբաղվածության կենտրոնից Ֆիլետան ստացավ համապատասխան աշխատանքի առաջարկ:

Այժմ Ֆիլետան աշխատում է ՀՄԻԿ-ում /Հայկական Սահմանադրական Իրավապաշտպան Կենտրոն/ որպես գրադարանավար, բայց միայն այդ աշխատանքով չի սահմանափակել գործունեությունը. փորձում է ներգրավվել նաև ծրագրերում, աջակցել՝ ինչով կարող է:

Գործատուն՝ ՀՄԻԿ նախագահ Գևորգ Մանուկյանը, ով տեղեկացված է և մեծապես կարևորում է LIFE ծրագիրը հատկապես մարդու իրավունքների տեսանկյունից, նշեց.

«Անելու եմ ամենք, որ Ֆիլետան կայանա մեզ մոտ, որովհետև նրա մոտ մտավոր մեծ պոտենցիալ եմ տեսնում:» Ի դեպ, ՀՄԻԿ-ում ներկայումս աշխատում են բազմաթիվ ՀՈՒԱ-ներ:

Աշխատավայր Ֆիլետան հասնում է սեփական մեքենայով: Նա նաև բավական փորձառու վարորդ է՝ շուրջ 20 տարվա ստաժով: Աշխատատեղում նրան

խանգարող միակ հանգամանքը գրադարանի բարձր դարակներն են: Խնդիրը, սակայն, շատ շուտով լուծում կատանա.

«Արդեն ընթացքի մեջ է հատուկ սանդուղքի պատրաստման աշխատանքները՝ ՀԱՈՒԲ զբաղվածությանն ուղղված «Աշխատատեղի հարմարեցում» պետական ծրագրով, որից հետո այլևս խանգարող հանգամանք չի լինի:»

Աշխատատեղի որոշակի հարմարեցում է կատարվել նաև «Լիարժեք կյանք» ՀԿ աջակցությամբ:

Հասարակական գիտակցության մեջ մեր պատմության հերոսուհին դրական փոփոխություններ տեսնում է և միաժամանակ ասում, որ իրազեկումն անընդհատ պետք է լինի, շատ բան կախված է հաշմանդամություն չունեցողներից, որպեսզի նրանք հասնեն այն գիտակցության որ հաշմանդամություն ունեցողը նույնպիսի մարդ է՝ իր իրավունքներով, կարողություններով ու պահանջ-մունքներով, ինչպիսին իրենք.

«Առաջիկայում մեզ մոտ կազմակերպելու են երկօրյա սեմինարներ՝ քաղաքացիական հասարակության և գործարար հատվածի ներկայացուցիչների համար՝ ուղղված համայնքներում մարդու իրավունքների մշակույթի զարգացմանը և հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրմանը մարդու իրավունքների կրթության միջոցով:»

Հ.Գ. Քիչ էր մնում մոռանալինք և Ձեզ հետ չկիսվեինք մյուս ոչ պակաս կարևոր հաջողությամբ. բոլորովին վերջերս Ֆիլետան նաև ընտանիք է կազմել: Կեսկատակ, կեսլուրջ ասում է, որ եթե չլինեք դժբախտ պատահարը / երբ վայր է ընկել, և վնասել ոտքը/, չէր ծնվի նաև իրենց ընտանիքը: Ֆիլետային ամուսնության առաջարկ է արել այն անձնավորությունը, ով իրեն օգնության ձեռք է մեկնել:

Հեղինակ՝ Լուսինե Սարգսյան

LIFE ծրագրի շրջանակներում նախատեսվող միջոցառումներ

Ամիս, ամսաթիվ	Միջոցառում	Վայր
6 նոյեմբերի, 2012թ.	<p style="text-align: center;">Քարոզարշավի բացում</p> <p>Հանրային կարծիքի հետազոտության արդյունքների ներկայացում <u>ՀՀ կառավարության, ԱՄՆ ՄԶԳ, ԶՊԾԳ, տեղական, միջազգային և մասնավոր կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ</u></p>	ք. Երևան, Էրեբունի Պլազա Սկիզբը - 12:00
14-16 նոյեմբերի, 2012թ.	Կյանքի հմտությունների ր աշխատանքի որոնման եռօրյա դասընթաց	ք. Ալավերդի, Լոռու մարզ
14 նոյեմբերի, 2012թ.	<p style="text-align: center;">Քարոզարշավ Լոռու մարզում.</p> <p>Հանրային կարծիքի հետազոտության արդյունքների ներկայացում և կլոր սեղան-քննարկում <u>մարզպետարանի, ՏԻՄ, մարզային ՀՈՒԱ հարցերով զբաղվող հանձնաժողովի, ԶՏԿ/ԶՄԿ, միջին մասնագիտական կրթական հաստատությունների, ՀԿ և մասնավոր կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ</u></p>	ք. Վանաձոր, Լոռու մարզպետարան
16 նոյեմբերի, 2012թ.	<p style="text-align: center;">Քարոզարշավ Կոտայքի մարզում.</p> <p>LIFE ծրագրի ներկայացում և կլոր սեղան-քննարկում <u>մարզպետարանի, ՏԻՄ, մարզային հանձնաժողովի, ԶՏԿ/ԶՄԿ, միջին մասնագիտական կրթական հաստատությունների, ՀԿ և մասնավոր կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ,</u></p> <p style="text-align: center;">Աշխատանքի տոնավաճառ</p>	ք. Հրազդան, Երիտասարդական կենտրոն, Կոտայքի մարզ Սկիզբը ժամը 11:00-ին
19 նոյեմբերի, 2012թ.	<p style="text-align: center;">Քարոզարշավ Գեղարքունիքի մարզում.</p> <p>Հանրային կարծիքի հետազոտության արդյունքների ներկայացում և կլոր սեղան-քննարկում <u>մարզպետարանի, ՏԻՄ, մարզային ՀՈՒԱ հարցերով զբաղվող հանձնաժողովի, ԶՏԿ/ԶՄԿ, Միջին մասնագիտական կրթական հաստատությունների, ՀԿ և մասնավոր կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ</u></p>	ք. Գավառ, զբաղվածության մարզային կենտրոն, Գեղարքունիքի մարզ
20 նոյեմբերի, 2012թ.	<p style="text-align: center;">Քարոզարշավ Վայոց ձոր մարզում.</p> <p>LIFE ծրագրի ներկայացում և կլոր սեղան-քննարկում <u>մարզպետարանի, ՏԻՄ, մարզային հանձնաժողովի, ԶՏԿ/ԶՄԿ, միջին մասնագիտական կրթական հաստատությունների, ՀԿ և մասնավոր կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ,</u></p> <p style="text-align: center;">Աշխատանքի տոնավաճառ</p>	ք. Եղեգնաձոր, Վայոց ձոր
21 նոյեմբերի, 2012թ.	<p style="text-align: center;">Քարոզարշավ Սյունիքի մարզում.</p> <p>LIFE ծրագրի ներկայացում, կլոր սեղան-քննարկում <u>մարզպետարանի, ՏԻՄ, մարզային հանձնաժողովի, ԶՏԿ/ԶՄԿ, միջին մասնագիտական կրթական հաստատությունների, ՀԿ և մասնավոր կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ,</u></p> <p style="text-align: center;">Աշխատանքի տոնավաճառ</p>	ք. Կապան, Սյունիքի մարզ

<p>Նոյեմբեր Ամսաթիվը դեռևս հստակեցված չէ</p>	<p>Քարոզարշավ Արարատի մարզում. Հանրային կարծիքի հետազոտության արդյունքների ներկայացում և կլոր սեղան-քննարկում <u>մարզպետարանի, ՏԻՄ, մարզային ՀՌԻԱ հարցերով զբաղվող հանձնաժողովի, ՉՏԿ/ՉՄԿ, Միջին մասնագիտական կրթական հաստատությունների, ՀԿ և մասնավոր կառույցների ներկայացուցիչների</u> մասնակցությամբ</p>	<p>ք. Արտաշատ, Արարատի մարզ</p>
<p>23 նոյեմբերի, 2012թ.</p>	<p>ԶՊԾԳ հետ համատեղ Գործատուների հետ Կլոր սեղան-քննարկում</p>	<p>ք. Երևան, Կոնգրես հյուրանոց, Մեծ սրահ Ժամը՝ 10:00-13:00</p>
<p>27 նոյեմբերի, 2012թ.</p>	<p>Քարոզարշավ Տավուշի մարզում. LIFE ծրագրի ներկայացում, կլոր սեղան-քննարկում <u>մարզպետարանի, ՏԻՄ, մարզային հանձնաժողովի, ՉՏԿ/ՉՄԿ, միջին մասնագիտական կրթական հաստատությունների, ՀԿ և մասնավոր կառույցների ներկայացուցիչների</u> մասնակցությամբ, Աշխատանքի տոնավաճառ</p>	<p>ք. Իջևան, Տավուշի մարզ</p>
<p>27 նոյեմբերի, 2012թ.</p>	<p>Քարոզարշավ Շիրակի մարզում. Հանրային կարծիքի հետազոտության արդյունքների ներկայացում և կլոր սեղան-քննարկում <u>մարզպետարանի, ՏԻՄ, մարզային ՀՌԻԱ հարցերով զբաղվող հանձնաժողովի, ՉՏԿ/ՉՄԿ, Միջին մասնագիտական կրթական հաստատությունների, ՀԿ և մասնավոր կառույցների ներկայացուցիչների</u> մասնակցությամբ</p>	<p>ք. Գյումրի, Շիրակի մարզ, «Փյունիկ» ՀԿ Հասցե: Ավստրիական թաղամաս, Մոցարտի 37ա Սկիզբը ժամը – 12:00- ին</p>
<p>28 նոյեմբերի, 2012թ.</p>	<p>Համակարգող աշխատանքային խմբի/ցանցի հանդիպում</p>	<p>ք. Վանաձոր, ՉՄԿ</p>
<p>30 նոյեմբերի, 2012թ.</p>	<p>Համակարգող աշխատանքային խմբի/ցանցի հանդիպում</p>	<p>ք. Գավառ, ՉՄԿ</p>
<p>Նոյեմբեր Ամսաթիվը դեռևս հստակեցված չէ</p>	<p>Քարոզարշավ Արմավիրի մարզում. LIFE ծրագրի ներկայացում, կլոր սեղան-քննարկում <u>մարզպետարանի, ՏԻՄ, մարզային հանձնաժողովի, ՉՏԿ/ՉՄԿ, միջին մասնագիտական կրթական հաստատությունների, ՀԿ և մասնավոր կառույցների ներկայացուցիչների</u> մասնակցությամբ, Աշխատանքի տոնավաճառ</p>	<p>ք. Արմավիր, Արմավիրի մարզ</p>
<p>Նոյեմբեր Ամսաթիվը դեռևս հստակեցված չէ</p>	<p>Քարոզարշավ Արագածոտնի մարզում. LIFE ծրագրի ներկայացում, կլոր սեղան-քննարկում <u>մարզպետարանի, ՏԻՄ, մարզային հանձնաժողովի, ՉՏԿ/ՉՄԿ, միջին մասնագիտական կրթական հաստատությունների, ՀԿ և մասնավոր կառույցների ներկայացուցիչների</u> մասնակցությամբ, Աշխատանքի տոնավաճառ</p>	<p>ք. Աշտարակ, Արագածոտնի մարզ</p>
<p>3 Դեկտեմբերի, 2012թ. Հաշմանդամների միջազգային օր</p>	<p>Քարոզարշավի ամփոփման արարողություն: Մամուլի ասուլիս Ֆոտոցուցահանդես</p>	<p>ք. Երևան, Կոնգրես հյուրանոց, Սկիզբը ժամը 11:00-ին</p>

Ուշադրություն

Ի գիտություն հետազոտողների, հասարակական և մասնավոր սեկտորի. ՏԵՂԵԿԱԳԻՐԸ հնարավորություն է տալիս լուսարանել հաշմանդամության ունեցող անձանձ ուղղված ծրագրերը/հետազոտությունները: Հետաքրքրվածության դեպքում կարող եք դիմել LIFE ծրագրի օգնական Մարիա Գևորգյանին՝ Maria.Gevorgyan@savethechildren.org էլ. հասցեով:

LIFE ՏԵՂԵԿԱԳՐԸ «Ի թողա րկոսալ ա տ րա ստ վաճառման Դ իգնիթիւնդ Փ իս» հիմնա դրա միողմից



Տեղեկա գրոսա րտ ա հա յո վաճառ կետ ներկայիս կներինհեղինա կներինեն և կա րող են չա րտ ա ցողի Մ Մ ՋԳի կա մՄ իա ցյաՆ ա հա նգներիա ռա վա րուփյախեսա կետ ները



«Մ ել դը փողրենը» երեխա ներիւրա վոնքների պ ա շտ պ ա նոփյազքիս ովողս մենա մեծ կա գմա կերպ ոփթոններիցս շի ա րհոսմ ի ներա ռոսւ: 29 ա զգա ինկա գմա կերպ ոփթոններընքգործոսմ են ա վերիքա ն 120 երկրներոսմ

«Մեյվ դը չիդրեն»-ի հայաստանյան ներկայացուցչություն ձև սցեն՝ Հ , Ե րևա 0023, Ա գա թա նգեղոնիս, 2-րդ հա րկ էո .՝ (010) 56-23-35, ֆա քս (010) 52-07-60
Էլ փ ոստ Armenia@savethechildren.org
Վ երկա ք՝ www.savethechildren.net

